Լեռնիկ Նահապետի Պետրոսյան

Հայաստանի մանկավարժահոգեբանական գիտությունների ակադեմիայի իսկական անդամ (ակադեմիկոս), մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1959 թվականի օգոստոսի 10-ին ՀՀ Սյունիքի մարզի Վերին Խոտանան գյուղում: Ամուսնացած է: Ունի երկու որդի:

Կրթությունը

Սկզբնական կրթությունը ստացել է Վերին Խոտանան գյուղի ութամյա դպրոցում: 1976 թվականին ավարտել է Կապանի թիվ 7 միջնակարգ դպրոցը և ընդունվել Երևանի պետական համալսարանի Ֆիզիկայի ֆակուլտետը:

1981 թվականին գերազանցությամբ ավարտել է համալսարանը՝ ստանալով ֆիզիկոս-մանկավարժի որակավորում:

Աշխատանքային գործունեությունը

1981-83թթ. աշխատել է Երևանի Կարլ Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտում որպես ավագ լաբորանտ:

1983-86թթ. աշխատել է Կապանի քաղժողկրթբաժնում որպես մեթոդիստ (համատեղությամբ՝ ԵրՊԻ Կապանի ուսումնախորհրդատվական կետում որպես դասախոս):

1986 թվականին նշանակվել է Կապանի թիվ 6 միջնակարգ դպրոցի տնօրենի տեղակալ՝ ուսումնական աշխատանքների գծով, իսկ 1988 թվականին ընտրվել է նույն դպրոցի տնօրեն՝ այդ պաշտոնում աշխատելով 9 տարի:

1996-97թթ. աշխատել է ՀՀ Սյունիքի մարզպետարանում որպես Կրթության բաժնի գլխավոր մասնագետ (համատեղությամբ՝ ֆիզիկայի ուսուցիչ):

1997 թվականին նշանակվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության Սյունիքի մարզային-տարածքային տեսչության պետ:

1998-2000թթ. աշխատել է ՀՀ Սյունիքի մարզպետարանում որպես աշխատակազմի Կրթության վարչության պետի տեղակալ:

2000-03թթ. աշխատել է Խ. Աբովյանի անվան Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի Կապանի հենակետային վարժարանի տնօրեն:

2003-06թթ. աշխատել է ՀՀ Սյունիքի մարզպետարանում որպես աշխատակազմի Կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ (համատեղությամբ՝ Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Գորիսի մասնաճյուղի դասախոս):

2006 թվականի մարտ-հուլիս ամիսներին աշխատել է «Հայաստանում Եվրոպական Քոլեջ» հիմնադարամի Կապանի քոլեջի տնօրեն:

2006/07 ուսումնական տարում աշխատել է ՀՀ կրթության և գիտության նախարարության Կապանի վարժարանում որպես ֆիզիկայի ուսուցիչ:

2007 թվականին ընտրվել և մինչև 2012 թվականն աշխատել է ՀՀ կրթության և գիտության նախարարության Կապանի վարժարանի (վերակազմակերպումից հետո՝ Կապանի թիվ 2 ավագ դպրոցի) տնօրեն:

2012-2016թթ. աշխատել է ՀՊՃՀ (2015 թվականից՝ ՀԱՊՀ) Կապանի մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատար:

2017 թվականից մինչև 2022 թվականի դեկտեմբեր ամիսը աշխատել է որպես ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի Մաթեմատիկայի և բնագիտական առարկաների ամբիոնի պրոֆեսոր:

2022 թվականի դեկտեմբերի 13-ից նշանակվել է ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատար:

2022 թվականին ընտրվել է Հայաստանի մանկավարժա-հոգեբանական գիտությունների ակադեմիայի իսկական անդամ (ակադեմիկոս):

Գիտական և գիտամեթոդական գործունեությունը

1999 թվականին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

2008 թվականին ստացել դոցենտի գիտական կոչում:

2008 թվականին պաշտպանել է դոկտորական ատենախոսություն և ստացել գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

2012 թվականին ստացել պրոֆեսորի գիտական կոչում:

Հեղինակ է 70-ից ավելի գիտական և գիտամեթոդական հոդվածների, ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից երաշխավորված 2 դասագրքերի և 4 ուսումնական ձեռնարկների: